Ներկայացվել է
«Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամի
խորհրդի 2018 թվականի մարտի 13-ի նիստին (5-րդ նիստ)

«ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ (ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ԱՄՓՈՓՈՒՄ.

«Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամը 2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի մարտի 5-ը կատարել է հետևյալ աշխատանքները.

I. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ

2017թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի մարտի 5-ը Հիմնադրամի կողմից օրենքով սահմանված կարգով կատարվել են թվով 39 հատուցումներ, որոնցից 28-ը՝ զոհված զինծառայողների, 11-ը՝ հաշմանդամ զինծառայողների:

Զոհված 28 զինծառայողներից՝

- 18-ը՝ պարտադիր զինվորական ծառայության կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողներ են, որոնցից յուրաքանչյուրին հասանելիք հատուցման գումարը կազմում է 58 մլն. ՀՀ դրամ,
- 4-ը՝ պայմանագրային զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողներ են, որոնցից յուրաքանչյուրին հասանելիք հատուցման գումարը կազմում է 70մլն. ՀՀ դրամ,
- 6-ը՝ սպայական կազմի զինծառայողներ են, որոնցից յուրաքանչյուրին հասանելիք հատուցման գումարը կազմում է 82 մլն. ՀՀ դրամ:

Հաշմանդամություն ունեցող 11 զինծառայողներից՝

- 5-ը I խմբի հաշմանդամ զինծառայողներ են՝
    - 4-ը՝ պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողներ, որոնցից յուրաքանչյուրին հասանելիք հատուցման գումարը կազմում է 58մլն. ՀՀ դրամ,
    - 1-ը՝ պայմանագրային զինվորական ծառայության ենթասպայական կազմի զինծառայող, որին հասանելիք գումարը կազմում է 70 մլն. ՀՀ դրամ,
- 6-ը II խմբի հաշմանդամ զինծառայողներ են՝
    - 2-ը՝ պայմանագրային զինվորական ծառայության սպայական կազմի զինծառայողներ, որոնցից յուրաքանչյուրին հասանելիք հատուցման գումարը կազմում է 53 մլն. ՀՀ դրամ,
    - 2-ը՝ պայմանագրային զինվորական ծառայության ենթասպայական կազմի զինծառայողներ, որոնցից յուրաքանչյուրին հասանելիք գումարը կազմում է 41 մլն. ՀՀ դրամ,
    - 2-ը պարտադիր զինվորական ծառայության կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողներ են, որոնցից յուրաքանչյուրին հասանելիք հատուցման գումարը կազմում է 29մլն. ՀՀ դրամ:

II. ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ

2017թ.-ի ընթացքում Հիմնադրամը մշակել է նվիրաբերությունների հավաքագրման հետևյալ եղանակները.

- Հիմնադրամի կայքի միջոցով
- Բանկային փոխանցումների միջոցով
- «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից թողարկված նամականիշերի միջոցով: Այս եղանակով հավաքագրված նվիրաբերությունների ընդհանուր գումարը կազմում է 4,230,800 ՀՀ դրամ:
- Հիմնադրամի լոգոն արտացոլող տիպերով ապրանքների վաճառքի միջոցով.
  Գուրմէ Դուրմէ շոկոլադ արտադրող ընկերության կողմից Հիմնադրամի լոգոն արտացոլող տիպերով շոկոլադե սալիկների վաճառքի միջոցով ընդհանուր հավաքագրված գումարը կազմում է՝ 500,000 ՀՀ դրամ:
- «ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ եւ «ԻԶԻ ՓԵՅ» ՍՊԸ տերմինալների միջոցով
- Հիմնադրամն աշխատում է հասանելի դարձնել նաև նվիրաբերությունների իրականացումը «PayPal» էլեկտրոնային քսակի միջոցով: «PayPal» էլեկտրոնային քսակը նվիրաբերությունների իրականացումը կդարձնի առավել ապահով և դյուրին Սփյուռքում բնակվողների համար:

III. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԵՐ - 01 հունվար, 2017 – 5 մարտ, 2018

	Գումար	Տոկոս
Հատուցումներ	***425,600,000***	100%
Շարքային և կրտսեր ենթասպա	264,600,000	62%
Ենթասպա	73,600,000	17%
Սպա	87,400,000	21%
Պարտադիր վճարներ	***6,748,331,042***	
Նվիրաբերություններ	***106,668,907***	100%
Կայքի միջոցով	13,359,803	13%
Բանկային փոխանցմամբ	93,309,104	87%
Կառավարումից ստացված եկամուտներ (Հիմնադրամի ակտիվների կառավարիչները թե՛ պարտադիր վճարներից, թե՛ նվիրաբերություններից հավաքագրված գումարները ներդնում են տարաբնույթ ակտիվներում: Սույնը ցույց է տալիս այդ ներդրումների արդյունքում ստացված եկամուտը)	***156,532,370***	

IV. **Հատուցումների գծով հիմնադրամի ստանձնած պարտավորություններ 2018թ.-ի մարտի 5-ի դրությամբ:**

	Վճարված հատուցման գումարներ			
	Զոհված	I խմբի հաշմանդամություն ունեցող	II խմբի հաշմանդամություն ունեցող	**Ընդամենը**
Միանվագ	*280,000,000*	*50,000,000*	*30,000,000*	*360,000,000*
Ամսական	*53,950,000*	*7,200,000*	*4,450,000*	*65,600,000*
Ընդհանուր	***333,950,000***	***57,200,000***	***34,450,000***	***425,600,000***

	Որոշման պահից 20 տարվա կտրվածքով ստանձնած ամսական անուիտետային պարտավորություններ	**Հատուցման ենթակա գումար մոտակա (20-t) տարիների ընթացքում**
Զոհված	*1,560,000,000*	*1,506,050,000*
1-ին կարգի հաշմանդամ	*252,000,000*	*244,800,000*
2-րդ կարգի հաշմանդամ	*216,000,000*	*211,550,000*
Ընդհանուր	***2,028,000,000***	***1,962,400,000***

V. ԴՐՈՇՄԱՆԻՇԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ՝ ԸՍՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՄԱՁԱՅՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵԿ-ԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ՝ 2017թ.-ի ՀԱՄԱՐ:

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Կազմակերպությունների կողմից վճարված գումար	488,032,000	491,531,000	501,204,000	503,476,000	508,179,000	507,115,000	502,291,000	492,016,000	496,208,000	492,447,000	482,996,000	446,614,000
Վճարող կազմակերպություններ	33,024	33,184	33,236	33,088	33,070	33,076	32,856	32,521	32,189	31,750	31,048	28,701
Վճարող աշխատակիցների քանակ	488,032	491,531	501,204	503,476	508,179	507,115	502,291	492,016	496,208	492,447	482,996	446,614

VI. ԿԱՏԱՐՎԱԾ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ՝ 01 հունվար, 2017թ. – 5 մարտ, 2018թ.



Վերադարձեր

Համաձայն «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքի 11-րդ և 12-րդ հոդվածների՝ 2018թ.-ի հունվարի 1-ից փետրվարի 28-ը Հիմնադրամը կազմակերպեց վճարված դրոշմանիշային վճարների վերադարձ՝

ա) ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողների ծնողներին, ամուսիններին և (կամ) զավակներին,
բ) զոհված (մահացած) զինծառայողների ծնողներին, ամուսիններին և (կամ) զավակներին,
գ) մեկից ավելի հիմքով դրոշմանիշային վճար վճարած (իրենց եկամուտներից հարկային գործակալի կողմից պահված) անձանց:

Հիմնադրամը 2018թ.-ի մարտի 5-ի դրությամբ ստացել է 3199 դիմումներ և շարունակում է ընդունել այն դիմումները, որոնք հանձնվել են փոստ մինչև փետրվարի 28-ը ներառյալ: Հիմնադրամը շարունակում է ստանալ նաև դիմումներ անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից, որոնք օրենքի համաձայն իրավունք ունեն դիմել Հիմնադրամ վճարված դրոշմանիշային վճարների վերադարձման համար մինչև սույն թվականի ապրիլի 30-ը ներառյալ:

Ստացված 3199 դիմումներից Հիմնադրամը ուսումնասիրել է 2652-ը: Ուսումնասիրված դիմումներից 2448-ը բավարարվել են և վերադարձման ենթակա գումարները փոխանցվել են դիմորդներին: Մնացորդը կազմող 204 դիմումները թերի են, ինչի կապակցությամբ Հիմնադրամի աշխատակիցները կապ են հաստատում դիմորդների հետ՝ թերությունները վերացնելու նպատակով:

Հունիսի 14-ին կայանալիք խորհրդի նիստին Հիմնադրամը կներկայացնի վերադարձված դրոշմանիշային վճարների վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն:

	Դիմումների քանակ	**Վերադարձված գումար**
Ընդհանուր	***2448***	***37,205,000***
1-ից ավելի հիմքով դրոշմանիշային վճար վճարած անձանց	1992	31,259,000
ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողների ծնողներին, ամուսիններին և (կամ) զավակներին	381	5,011,000
զոհված (մահացած) զինծառայողների ծնողներին, ամուսիններին և (կամ) զավակներին	75	935,000

Հիմնադրամն իրականացրել է վճարված գումարների վերադարձման գործընթացի չափագրում, որի արդյունքում պարզվել է, որ 1 դիմումի սպասարկման համար անհրաժեշտ միջին ժամանակը կազմել է 00:31:12 րոպե: Մեկ դիմումի լիարժեք սպասարկման համար աշխատել է 10 աշխատակից:

Ի գիտություն հայտնում ենք, որ դիմումների սպասարկումը բաղկացած է եղել հետևյալ փուլերից.

1. Դիմումների ընդունում
2. Դիմումի տեսակավորում, հասցեագրում
3. Դիմումի մուտքագրում համակարգ
4. Փոխանցված ֆայլի ստուգում՝ կրկնողություններից խուսափելու համար
5. Վճարման հանձնարարականի ձևակերպում, տպում, կնքում, ստորագրում
6. Վճարման հանձնարարականի մուտքագրում
7. Փոխանցման 1-ին հաստատում

8. Փոխանցման 2-րդ հաստատում
9. Փոխանցման հանձնարարականների արխիվացում
10. Քաղվածքների ձևակերպում, ստորագրում, վճարում
11. Հասցեատիրոջը չհասած գումարների հետ աշխատանք
12. Խնդրահարույց (թերի փաստաթուղթ, թերի տեղեկատվություն)